

Թէ կայսեր հօրեղբորը Հերոնիմոս իշխանին յուղարկաւորութեան հանդիսին նման :

Հետեւեալն յաջորդ բռնով :

Միջերկրական ճովը Միշեզի
ըրանցքին մէջ :

Ետքի տարւոյս (1862) վերջերը Եւրոպիոյ բոլոր լրագիրներն աւետեցին՝ որ նոյեմբերի 18ին Միջերկրականին ջրերը Սիւէզի ջրանցքին մէջտեղուանքը դադարեցին լիճը մտեր են . հիմա Միջերկրականը կարմիր ծովուն հետ բոլորովին խառնելու համար կը մնայ որ Դիմաս լճէն ինչուան կարմիր ծովուն բերանը Սիւէզ ջրանցքը փորուի :

Արդէն Բազմավիպիս մէջ երկու անգամ (Հատ. ԺԷ. 375 . ԺԸ. 338) աս նիւթիս վրայ բաւական ընդարձակ յօդուածներ հրատարակուած են . աս անգամուս մեր ընթերցողաց աչքին առջև կը դնենք աս ջրանցքին ծրագիծը (plan) հարկաւոր տեղերը թիւերով նշանակուած , իսկ վարը աս թիւերունցըցուցած տեղերուն անունները կը դրենք . միայն հոս հարկ կը համարինք ծանուցանելու որ Միջերկրականին վրայ նորաչէն Սայիտ նաւահանգիստն ու քաղաքն՝ ուր որ հիմա 10,000 բնակիչ , մզկիթ , եկեղեցի և ուրիշ հասարակաց շէնքեր կ'երևան , մեր ծրագիծին վրայ նշանակուած չէ , բայց իրեն գիւրքը Միջերկրականին վրան ջրանցքին բերանը կ'իյնայ :

A. — B. Ջրանցքին երկայնութիւնը , 120 հաւաքամեղր .

1. Փարոս և ամբարտակ ջրանցքին բերանը .
2. Դրուէք ջրանցքին .
3. Աւազան նաւաց դադարման .
4. Աւերակք Պելուսիոնի .
5. Դինէ .
6. Լիճն Մէնզալէ .
7. Քանգարա , Պաղեստինու ճամբուն վրայ .
8. Սալէէ .
9. Կասիոս լեռ .
10. Քաղիէ .

11. Վէցերորդ կայանք զիտողութեան յանձնաժողովին .
12. Աւերակք Մակտալի .
13. Էլ-Ճէզ .
14. Լիճն Դիմաս .
15. Ճարտարապետաց բնակարանը .
16. Սերապիոն .
17. Հետք հին ջրանցքին .
18. Աւազան Պարանոցին (isthme) .
19. Պերսեպոլեան յիշատակարան Կամբիւսի .
20. Արալին կայանք Լինան-Պէյի , Մուսէլ-Պէյի ու Պ . Լէսէբսի .
21. Զրադարձ Պաղմեանց , հիմա Դէլ-Էլ-Բէս-մէջ .
22. Սիւէզ .
23. Գերեզմանոց Եւրոպացւոց .
24. Հնդկաստանի ուղևորներու իջևանը .
25. Աւազան դադարման նաւաց .
26. Դրուէք աս աւազանին .
- 27 — 28. Գահիրէէն Մէքէ գացող կարաւանին անցքը .
29. Ջրանցքին բերանը 'ի Սիւէզ . փարոս , ամբարտակ , և այլն .
30. Զրամբարք Նիլոսի ջուրին համար .
31. Զրամբարք անձրեկի ջուրին համար .
32. Հին ջրամբարք Ագաբայի հեղեղաաններէն և կած ջրերուն համար .
33. Աճէրու բերդը .
34. Վերջին հանգոյց Գահիրէէն 'ի Սիւէզ .
35. Սիւէզի ջրհորները .
36. Ճամբայ Սիւէզէն 'ի Գահիրէ .
37. Ագաբա լեռ .
38. Ճէպէլ Ալպէզ .
39. Ճէպէլ Շէպրէվէզ .
40. Ճէպէլ Թիէզ .
41. Անուշ ջրի ջրանցք Նիլոսէն գալով .
42. Ռաս-Էլ-Ուատի .
43. Ռամեսէ քաղքին հետքը .
44. Դէլ-Մօսսէր-Սօքօթ .
45. Դէլ Նային .
46. Էթրամ .
47. Թէլ-Պուզ .
48. Գերեզման Պաալ-Չէֆան Շէխին .
49. Պիր-Մարվա (լեզի ջրհոր) :

